ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 8 ՆԻՍՏԻՑ

Օրակարգ

1. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին(դասալսումների վերաբերյալ տվյալները պետք է ներկայացնել գրավոր):
3. Ընթացիկ հարցեր:

Քիմիայի ֆակուլտետի դեկան Ա.Ս.Գալստյան - Հարգելի գործընկերներ, աշխատանքային օրակարգը բոլորիդ ծանոթ է, եթե առաջարկություններ չունեք հաստատենք օրակարգը և սկսենք մեր նիստը ։

Օրակարգը առանց փոփոխությունների հաստատվեց բաց քվեարակության միաձայն արդյունքով:

Ա.Ս.Գալստյան,- Լսենք ամբիոնի վարիչների հաղորդումը, ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան - Ամբիոնում նորմալ հունով ընթացել են ընթացիկ քննությունները, ոչ մի արտակարգ իրավիճակ տեղի չի ունեցել: Ձմեռային քննաշրջանին նույնպես պատրաստ ենք: Քննական տոմսերը հաստատելուց առաջ ստուգում համընկնելիությունը ծրագրի հետ: Ամեն ինչ նորմալ է, խնդիրներ չկան:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Ի.Մարտիրյան - քննաշրջանի պատրաստ ենք խնդիրների չկան:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, դոցենտ Գ.Ս.Գրիգորյան - Մենք պատրաստ ենք քննաշրջանին: Իրականացվում է քննությունների ընթացքի վերահսկում և կազմված է ժամանակացույցը: Միակ առաջարկը, եթե գրասենյակում

ինչ պատճառով օր կամ ժամ է փոխվում՝ պետք է անպայման համաձայնացնել դասախոսի հետ։

ՈւԽ Նախագահ Էմմա Վարդանյան – Քննական օրերի փոփոխությունը կատարվում է գրասենյակում և ուսանողներին նույնպես չեն տեղեկացնում։

Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյան - Այսքան ժամանական նման բաց թողում չէր եղել։ Այս հարցի տեխնիկական լուծումը կտրվի։ Միայն մեկ ավելացում խնդրում եմ նշեք նաև քննության տիպը՝ գրավոր, բանավոր։

Ա.Ս.Գալստյան - Այժմ անցնենք օրակարգի երկրորդ հարցին՝ ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների վերաբերյալ։

Ն.Ա.Դուրգարյան - այս կիսամյակ մեր ամբիոնում դասալսում չկա։

Ա.Ի.Մարտիրյան – մեր ամբիոնում դասալսումները իրկանացվում են և դա կրում է հետևողական բնույթ։ Ընթացքում ֆիքսվել են մի քանի թերություններ, որոնք առանցքային բնույթ չեն կրում և քննարկվել են համապատասխան դասախոսների հետ։

Գ.Ս.Գրիգորյան - Իրականացվել է 5 առարկաների կտրվածքով՝ «Փորձարարական տվյալների մշակում», «Քվանտային քիմիա», «Նյութի կառույց», «Ալկոհոլային և ոչալկոհոլային խմիչքների արտադրական չափանիշներ» և «Սննդամթերքի որակի վերահսկում»։ Դասընթացները իրականացվում է բարձր մակարդակով, իսկ էլեկտրոնային տարբերակները տեղադրված են կայքում։

Ն.Ա.Դուրգարյան – ուզում եմ նշել, որ բարձր մակարդակի վրա դրված է նաև միջամբիոնային համագործակցությունը։ Հետազոտական բաղադրիչով առարկայի շրջանակներում շատ փորձարարական տվյալներ ստացել ենք այլ ամբիոնների սարքային ռեսուրսների օգնությամբ։

Ա.Ս.Գալստյան – Հարգելի գործընկերներ անկախ ամեն ինչից ես նույնպես հետևում եմ դասապրոցեսներին, ֆիքսել եմ ուսանողների վատ հաճախելությունը, որը չի ֆիքսվում մատյաններում։

Գ.Ս.Գրիգորյան – դասերը էլեկտրոնային տարբերակով տեղադրված են կայքում, ուսանողը բացակայության դեպքում հնարավորություն ունի թեման տեսնել: Բացակայությունները պայմանավորված են նրանց աշխետելու փաստի հետ:

Տ.Վ.Ղոչիկյան – Աշխատելու խնդիրը արհեստական է ստեղծված: Նախ ուսանողները ունեն մեկ-երկու օր ազատ և դասերը վերջանում են ամենաուշը 8-րդ ժամով, հետևաբար կարող է աշխատանքը հարմարեցնել ըստ դասացուցակի և ոչ թե դասերը՝ ըստ աշխատանքի:

Ա.Ս.Գալստյան – Ընթացիկ հարցերում. ունենք մի քանի քննարկումներ

1. Հարցը ներկայացրեց քիմիա բակալավրի ծրագրի ղեկավար Լ.Ս.Գաբրիելյանը

-Խնդրում եմ ամբիոնի վարիչներին, իրենց ամբիոններում տեղեկացնեն, որ 2-րդ կիսամյակի մինչև փետրվարի 9-ը կայքում տեղադրեն առարկայի մասնագիրը, հարցաշարը և լաբորատոր աշխատանքների ցանկը: Բացի այս ամենը պետք է նաև շաբաթական կտրվածքով յուրաքանչյուր շաբաթ դասից առաջ կամ հետո տեղադրեն օրվա դասախոսության թեման և տեսասահիկը:

Քիմիայի ֆակուլտետի դեկան, նիստի նախագահ Ա.Ս.Գալստյան- Նորից հիշեցնում եմ ամբիոնի վարիչներին, որ առարկայի ծրագիրը նույնպես պետք է դրվի: Ծրագիրը պետք է ստորագրված և հաստատված լինի դասախոսների, ԿԾ ղեկավարի և ամբիոնի վարիչի կողմից:

2. Ա.Ս.Գալստյանը - բոլորիդ ուղարկված է եղել Բակալավրիատի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի բովանդակության լրացուցիչ պահանջները: Ինչ առաջարկներ ունեք:

Երիցյան Է. ուսանող - Մենք ունենք օղակ, որը կարող է ստուգել ավարտական աշխատանքների տեխնիկական մասը:

Ա.Ս.Գալստյան - Այո: Ավարտական աշխատանքների նախնական պաշտպանությունը կայանում է ամբիոններում, պաշտպանությունից 14 օր շուտ: Այս ժամանակահատվածը բավական է շտկումների տեխնիկական վրիպակների և ինչու ոչ համալրումների համար: Պաշտպանությունից 5 օր առաջ աշխատանքները

ներկայացնելու ենք գրասենյակ։ Այս ընթացքը բավական է հանձնաժողովի անդամների ծանոթանալու աշխատանքների հետ և նշելու աշխատանքում տեղի գտած թերությունները։ Միայն ներկայացման գնահատականը ուսանողը կստանա պաշտպանության օրը։ Այս մոտեցումը կտա աշխատանքի իրական գնահատականը։

Երիցյան Է. ուսանող – Կարգի մեջ պետք է մտցնել նաև գրագողության չափաբաժինը։

Ա.Ս.Գալստյան – Գրագողության չափաբաժինը պետք է մտցնել, մենք այն հաստատել ենք (ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ԳԽ թիվ 14 նիստի, 07.05.25թ.-ի որոշում-ով)։ Ըստ որի ավարտական աշխատանքների համար Turnitin Similarity գործիքով աշխատանքի անտիպլագիատի թույլատրելի շեմն է 50%-ը և մագիստրոսական թեզերի համար անտիպլագիատի թույլատրելի շեմն է 40%-ը։ (Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի փոփոխված և համալրված կարգը կցվում է)։ Առաջադրված կարգը դնում ենք քվեարկության։

Որոշեցին- Բաց քվեարկության միաձայն արդյունքով, որոշեցին հաստատել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերանայված և համալրված կարգը։

Նիստի նախագահ

Դոցենտ Ա.Ս.Գալստյան

Նիստի քարտուղար

Դոցենտ Մ.Ա.Սամվելյան